ՄԱՐԻԱՆՆԱ ԱՊՐԵՍՅԱՆ

ՀԱՐՍԻ ԳԱԹԱՆ ՊՈՆՏՈՍԻ ՀՈՒՅՆԵՐԻ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳՈՒՄ

Պատմական Պոնտոսը դեռևս միջնադարից բնակեցված լինելով տարբեր լեզվա-կենցաղամշակութային յուրահատկություններով օժտված ժողովուրդներով (հույներ, հայեր, թուրքեր, քրդեր, լազեր, թաթարներ և այլն) էթնոմշակութային մի բարդ և բազմաշերտ խճանկար է ներկայացնում: Պոնտոսի հույն ազգաբնակչությունը Հունաստանից և հունական մշակույթից մեկուսացված լինելով, ապրելով Հյուրընկալ Պոնտոսի (Εὐξένος Πόντος), այսինքն՝ Սև ծովի ավազանում՝ ունեցել է բազմերանգ, յուրօրինակ ավանդույթներով համեմված մշակույթ ու կենցաղ:

Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել Պոնտոսի հույների հարսանեկան ծեսի հետ առնչվող ուշագրավ մի դրվագ՝ հարսի գաթան պատրաստելու ծեսը:

Պոնտոսի պատմա-ազգագրական տարբեր շրջաններում հարսի գաթան տարբեր կերպ է պատրաստվել և զանազան գործառույթներ է ունեցել: Այս ավանդույթն այնքան խոր արմատներ է գցել նրանց կենցաղում, որ 18-րդ դարի երկրորդ կեսին նրանց հետ տեղափոխվել է նաև Հայաստան և գոյատևել մինչև 1990-ական թվականները, այսինքն՝ մինչև Հայաստանից հույների զանգվածային արտագաղթը Հունաստան:

Պոնտոսի հույների մեջ հարսի հատուկ գաթայի պատրաստումը գալիս է դեռ շատ վաղ ժամանակներից[1], թեև դարերի ընթացքում կրել է որոշակի փոփոխություններ:

Համաձայն հունալեզու ազգագրական գրականության, հարսի գաթան պատրաստվել է երկու անգամ. նախ նշանադրության գնալուց մեկ օր առաջ, ապա հարսանեկան ծեսից առաջ՝ չորեքշաբթի, որոշ բնակավայրերում էլ՝ հինգշաբթի օրը, հացի և թխվածքների պատրաստման ժամանակ[2]:

Նշանադրության ժամանակ, քահանայի կողմից հարսնացուի և փեսացուի նշանի մատանիները օրհնելուց և միմյանց մատ հագցնելուց հետո, փեսացուի մայրը հարսին է հանձնում նվերները (ծաղկավոր կտորից գլխաշոր, կանացի գլխանոց՝ ֆես, վրան երեք հատ մետաղադրամ կախած), ապա սինի-մատու-

[1] Խոսելով հունա-հռոմեական ամուսնությունների մասին ֆրանսիացի մարդաբան Շարլ Լետուրնոն հիշատակում է «տասն վկաների առջև ժիւպիտերի քրմապետի տուած գաթան փեսի հետ բաժանելու» փաստը: Տե՛ս Շարլ Լետուրնո, Ամուսնութեան զարգացումը, թարգմ. ֆրանսերենից Եր., Լալայանի, Ազգագրական հանդես, Ա. մաս Բ՝ Մարդաբանություն, Շուշի, 1896, էջ 111:

[2] Տե՛ս Γεωργιάδης Θανάσης, Ο Πόντος, τόμος 2, Θεσσαλονίκη, 1994, էջ 561-562:

ցարանի միջից հանում է *նշանի գաթան (σουμαδόψωμι)*[3], երկու մասի բաժանում, որից մեկը թողնում է հարսի ծնողներին, իսկ մյուսը մաս-մաս է անում և տալիս բոլոր ներկա գտնվողներին[4]: Նման բնույթի արարողություն տեղի է ունեցել նաև հայկական ավանդական նշանադրության ժամանակ, որը հայտնի է *«հաց կտրել»*, *«կես պսակ»* անվանումներով: Այս դեպքում իրար վրա դրված երեք լավաշ հացերը մի կողմից բռնում էր տղայի, մյուսից աղջկա հայրը: Քահանան հարցով դիմում էր նախ աղջկա, ապա տղայի հորը փոխադարձ վերջնական համաձայնություն կայացնելու համար: Խնամիները երիցս հավաստելով իրենց համաձայնությունը ծգելով կտրում էին լավաշները, մի մասը տալիս էին հարսին, մյուսը փեսային: Այլ տարբերակում փեսացուի հայրը, որ ծգտում էր ավելի մեծ բաժին ստանալ, դնում էր ծոցը, որ տուն տանի հավատալով, որ դրա հետ նաև հարսնացուի *դսմաթն* է իր տուն տանում[5]:

Ինչ վերաբերում է հարսանիքին պատրաստվող հարսի գաթային, ապա Պոնտոսի հույներն այն թխում էին փեսայի տանն այդ առիթով հավաքված կանանց օգնությամբ, որոնք ըստ ավանդույթի փեսայի տուն շտապելով ամեն մեկն իր հետ ինչ-որ մի բան էր բերում ծու, կարագ, շաքար, ալյուր, մեղր և այլն: Եթե համեմատենք հայկական ավանդական հարսանեկան ծեսերի հետ, ապա կտեսնենք, որ նույն հայկական *տաշտադրոնքն* է *հացի ու խմորի օրը*[6], որ հայերն իրականացնում էին հինգշաբթի կամ ուրբաթ օրը: Այդ օրը տանտիրուհու կամ հմուտ հացթուխի *քեչվանու* գլխավորությամբ, երբեմն երաժշտության ուղեկցությամբ, հրավիրյալ կանայք և աղջիկները սկսում էին արարողությունը. մաղում էին հացի և արգասավորության խորհրդանիշ հարսանեկան գաթայի ալյուրը, խմորի տաշտի վրա մոմեր էին վառում, որպեսզի հարսը լույսի նման պայծառ լինի[7]:

Պոնտոսի հույները *հացի ու խմորի օրը* թխում էին նաև *փսաթիրիան* (հատուկ զարդարված) և *տրիգոնիան* (եռանկյունաձև) հարսանեկան ավանդական թխվածքները, որոնք նաև փեսացուի հորաքրոջ կամ մոտ ազգական որևէ կնոջ հետ հարսի տուն էին ուղարկում ի նշան հարսի ծնողներին և ազգականներին հարսանիքի օրն իրենց տուն հրավերի: Այնուհետև ցորենի ալյուրով, կարագով ու շաքարով պատրաստում էին նաև հատուկ կարևորություն ներկայացնող *հարսի*

---

[3] Տե՛ս Φροσώ Μπαλτατζή-Σταματιού,Ιστορική ανάδρομη στις ρίζες, Θεσσαλονίκη, 1997, էջ 92:
[4] Տե՛ս Δ. Η. Οικονομίδης, Γαμηλία έθιμα, Αρχείον Ποντού, τόμος 1, Αθήνα, 1928, էջ 129:
[5] Տե՛ս Ռ. Ա. Նահապետյան, Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը, Երևան, 2007, էջ 80-81:
[6] Տե՛ս Ռ. Ա. Նահապետյան. Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը. մաս 1, Եր., 2009, էջ 99:
[7] Անդ:

գաթան νεγαμοψωμί (նորապսակների հացը)[8], որի մեջ խրում էին որևէ երիտասարդ տղայի կամ մատղաշ աղջկա ձեռքով կտրած խնձորենու ճյուղը՝ ծայրերին թխված գաթայի խմորից փոքրիկ գնդիկներ կպցրած[9]: Խնձորենու ճյուղն այս պարագայում պատահական բնույթ չէր կրում, քանի որ ինչպես հույն, այնպես էլ հայ ազգագրական ավանդության մեջ խնձորը սիրո և պտղաբերության աստվածությունների խորհրդանիշն է, անմահական պտուղը[10]: Շատ տեղերում հունական դիցաբանության մեջ սիրո և գեղեցկության աստվածուհի Աֆրոդիտեն հանդես է գալիս խնձորը ձեռքին: Գաթայի խմորի գնդերով զարդարված խնձորենու ճյուղը ընդհանրություն ունի հայկական *ուռքի՝ կենաց ծառի*[11] հետ, որն ըստ էության կապված է ծառի, տվյալ դեպքում խնձորենու պաշտամունքի հետ և խթանում է պտղաբերությունը:

Եթե նույն այս հարսի գաթան բոլոր վայրերում իր ձևով կլոր էր, ապա Կապադովկիայի հույները դրան երկար ու նեղ ձև էին տալիս[12]: Համաձայն տեղի հույների ավանդույթի, հարսանիքի օրը գաթան հարսի տուն տանելուց մեջը ոչ թե խնձորենու ճյուղ էին տնկում, այլ երեք վառված մոմ: Հարսնառի խումբը հարսի տուն հասնելուց հետո, երբ քավորակինը հարսին հագցնում ու զարդարում է, երեք անգամ գաթան պտտեցնում է նրա գլխավերևում, մասերի բաժանում ու տալիս ներկա գտնվողներին: Գաթան բազում կտորների վերածելը խորհրդանշում է նոր կազմավորվող ընտանիքն արգասավորել երեխաների ծնունդով, իսկ այն երիտասարդներին բաժանելը նշանակում է դեռևս չամուսնացածներին ամուսնության մղել և արգասավորությամբ օժտել[13]:

Կապադովկիայի բնակավայրերից Ֆարասայում[14] հարսի գաթան եռանկյունաձև էր և թխելու ժամանակ վրան երեք ուռուցիկ գնդեր էին անում: Հարսանիքի օրը հարսնառի առջևից գնում էր նախօրոք ընտրված մի երիտասարդ տղա գլխին սինի դրած, որի մեջ էին հարսի հարսանեկան զգեստները, կոշիկները և մետաքսե բողով փաթաթված հարսի գաթան: Քավորակինը հարսին հագցնելուց հետո գա-

---

[8] Տե՛ս Ν. Λαπαρίδη, Το Νυφέπαρμαν, Αρχείον Ποντού, τόμος 38, Αθήνα, 198, էջ 208-209:
[9] Տե՛ս Δ. Η. Οικονομίδης, Γαμηλία έθιμα, Αρχείον Ποντού, τόμος 1, Αθήνα, 1928, էջ 138:
[10] Տե՛ս Е. Г. Кагаров, Культ растений и животных в Древней Греции, СПб., 1913, էջ 163-164:
[11] Տե՛ս Վ. Պետոյան, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 250:
[12] Տե՛ս Κων/νος Μ. Νίγδελης, Σ. Κοιμίσογλου, Το Ανταβάλ της Καππαδοκίας, Θεσσαλονίκη, 2006, էջ 77:
[13] Տե՛ս Κων/νος Μ. Νίγδελης, Καππαδοκία, Δρώμενα γάμου, Θεσσαλονίκη, 2008, էջ 50-51.
[14] Ֆարասան Կապադովկիայի խորքում գտնվող տիպիկ հունական քաղաք է, որը սկզբում եղել է բացառապես հույներով բնակեցված, սակայն հետագայում թուրքական տարրի շատանալով և այնտեղ հաստատվելով, մինչև հույների վերջնական տեղահանությունը երկար տարիներ ապրել են թուրքերի հետ միասին: -Λάζαρος Μ. Κελεκίδης, Τα Φαρασά της Καππαδοκίας, Θεσσαλονίκη, 2005, էջ 121.

թայի վրայի քողը կապում էր հարսի գլխին, գաթան նրա գլխավերևում կիսում էր, մի կեսը մասնատելով բաժանում էր ներկա գտնվող երիտասարդներին, մյուսը թողնում հարսի հոր տանը:

Հայաստանում բնակվող, ապա Հայաստանից Հունաստան տեղափոխված, ինչպես նաև Վրաստանի Ծալկայի շրջանի հունաբնակ գյուղերից Հունաստանի Թեսալոնիկե քաղաք տեղափոխված որոշ հույներից գրառած մեր դաշտային ազգագրական նյութերն ունեն հետևյալ պատկերը:

XVIII դարի 60-ական թվականներից Վրաստանի Հերակլ Բ թագավորի հրավերով[15] Գյումուշհանեից (Արգիրուպոլիս), Տրապիզոնից և այլ քաղաքներից Ախթալայի, Ալավերդու և Շամլուղի պղնձաձուլական գործարաններ աշխատելու եկած հույներն իրենց ընտանիքներով Հայաստանում հաստատվելով իրենց հետ բերեցին նաև իրենց լեզուն, մշակույթը և ավանդույթները: Պոնտոսից տեղափոխված հույների այն հատվածը, որն ապրել է հավաք ու կղզիացած, հարազատորեն պահպանել է իր լեզուն, կենցաղամշակութային յուրահատկությունները, մինչդեռ հայ բնակչության միջավայրում, նրա հարևանությամբ ապրելով շատ ավանդույթներ մոռացության են մատնվել և կրել են հայկական միջավայրի ազդեցությամբ եկած փոփոխություններ:

Հայաստանի հունաբնակ բնակավայրերից գրառած և տեսագրած հարցազրույցներից պարզվեց, որ նշանադրության ժամանակ սկեսուրի կողմից թխված և հարսի տուն տարվող *նշանի գաթան* ընդհանրապես գործածությունից դուրս է եկել, հանգամանք, որ բնորոշ է Պոնտոսի հունական ավանդույթներին: Սակայն հարսանիքից առաջ նախօրոք պատրաստվող հարսի գաթան *նորապսակների հացը*, մինչև օրս պահպանվում է: Քանի որ դաշտային ազգագրական նյութեր գրառելիս այս հարցի շուրջ ստացանք տարաբնույթ և չափազանց հետաքրքիր պատասխաններ, ուստի հարկ ենք համարում դրանք ստորև ներկայացնել:

Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի Յաղդան գյուղի բնակիչներ Ամիրովա Թամարան (ծնվ. 1932թ.) և Ամիրովա Նինան (ծնվ. 1935թ.) հարսի գաթան անվանեցին *նիֆեսի (նύφη) բյաթա*, այսինքն *հարսի գաթա*, որը թխում են խերով, բազում տղա երեխաների տեր կանայք և անձեղ, դեռևս կյանք չմտած աղջիկները հարսանիքից մեկ օր առաջ ու վրան չորս հատ ուռուցիկ գնդեր են անում: Հարսին հազցնելուց հետո քավորակինն այդ գաթան կիսում է հարսի գլխավերևում և մաս-մաս անելով բաժանում ներկա գտնվող ամուրի տղաներին ու աղջիկներին[16]:

---

[15] Տես И. Г. Каспарова, Меднорудная промышленность дореволюционной Армении и иностранный капитал, Ереван, 1961, էջ 7–8:

[16] Տես Ս. Ապրեսյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ ԴԱՆ), 2010, ՀՀ, Յաղդան, տ. 6, էջ 8-11:

Ծնունդով Յաղդան գյուղից, բայց Կողես գյուղ ամուսնացած Գարգալեջեվա Եվգենիան[17] (ծնվ. 1947թ.) հաղորդեց, որ իրենք ևս պարտադիր հարսի գաթա են տանում, որին նրանք *խաչմա* են անվանում: Երբ հարսնառի խումբը հասնում է հարսի տուն, քավորակինը կանանց և մանկամարդ աղջիկների հետ մտնում է առանձնացած հարսի բաժանմունքը, հագցնում է նրա հարսանեկան զգեստը, այնուհետև վերցնում է խաչմա-գաթան, երեք անգամ պտտում հարսի գլխավերևում, խաչ անում, կոտրում այն և կտոր-կտոր անելով բաժանում երիտասարդներին: Այդ գաթայի կտորներից էլ անպայման մեկ հատ հետները տանում են փեսայի տուն և որպես սուրբ հաց պահում տանը:

Ախթալայում բնակվող Խիտարով Վլադիմիրը[18] (ծնվ. 1928թ.) և Շամլուղի Բենդիկ ավանում բնակվող Յանկարոզով Վասիլին (ծնվ. 1934թ.) և նրա կինը Լիզան[19] (ծնվ. 1938թ) հաղորդեցին, որ իրենք ևս պարտադիր կերպով մինչև օրս պահպանում են այս ավանդույթը: Հարսի գաթան նրանք անվանեցին *πίτα με χορίζ' – խորիզով պիտա՝ կարկանդակ*, որն իր ձևով կլոր է և մեծ: Երբ քավորակինը *(κουμβάρτσα)* հարսին հագցնում է ու քողը գցում գլխին, վերցնում է *պիտան* և կիսում հարսի գլխավերևում: Մի մասը դնում են հարսի ճամպրուկի մեջ, որ հետը տանի, իսկ մյուսը կեսը մասնատում ու բաժանում են երիտասարդներին:

Նույն թեմայով տրված հարցին Կոտայքի մարզի Հանքավան գյուղի բնակիչ, Եփրեմովա Նատալյան (ծնվ. 1929թ.) հաղորդեց, որ այդ մեծ և կլոր գաթայից Հանքավանի հույները երկու հատ են թխել, որից մեկը փեսան քավորի հետևից գնալու ժամանակ տանում է նրա տուն, մյուսը քավորակինը հարսին հագցնելուց հետո պահում է հարսի գլխավերևում, ապա դրանով նրա գլխին խաչ է անում և հետո ձեռքով երկու մասի բաժանում, որից առաջին կեսը մաս-մաս անելով բաժանում է երիտասարդ աղջիկներին, իսկ երկրորդ կեսը դնում հարսի ծնողների տանը բացված խրախճանքի սեղանին[20]: Նույն գյուղի բնակիչ Չախիրովա Ռոզան (ծնվ. 1937թ.) հաղորդեց, թե հարսի գաթան այս անգամ *չորակ (τσουρέκι)* անվամբ, մեկ հատ են թխել, որը հարսին հագցնելուց հետո կիսել են նրա գլխավերևում, մի մասը տվել են հարսի ծնողներին, իսկ մյուս մասը կտորների են վերածել ու բաժանել ներկա գտնվողներին[21]:

Նույն երևույթի մասին մեզ հաղորդեցին նաև միջին սերնդին պատկանող Սաղանի նախկին բնակիչներ, բայց այժմ Հունաստանի Դիդիմոտիխո քաղաքում

---

[17] ԴԱՆ, տեսաերիզ 7, 2010, (ՀՀ, Կողես):

[18] ԴԱՆ, տեսաերիզ 6, 2010, (ՀՀ, Ախթալա):

[19] ԴԱՆ, տեսաերիզ 8, 2010, (ՀՀ, Շամլուղ - Բենդիկ):

[20] ԴԱՆ, տ. 4, 2009, (ՀՀ, Հանքավան), էջ 6-8:

[21] ԴԱՆ, տ. 5, 2009, (ՀՀ, Հանքավան), էջ 7-8:

բնակվող Պավել (ծնվ. 1961թ.) և Մարիա (ծնվ. 1965թ.) Կերխանադիսները[22]: Ըստ նրանց հաղորդածի, մադանցիները հարսի գաթային անվանել են *ψωμί (փսոմի=հաց)*:

Ինչպես տեսնում ենք, հարսի գաթայի պատրաստումը, անվանումն ու կիրառումը բավական տարաբնույթ են ոչ միայն Պոնտոսի պատմա-ազգագրական տարբեր շրջաններում, այլև Հայաստանի հունաբնակ գյուղերում: Չափազանց ուշագրավ է նաև այն փաստը, որ Հունաստանում Վրաստանի Ծալկայի շրջանի հունաբնակ գյուղերի նախկին բնակիչներ Թերսենով Ալեքսանդրը (ծնվ. 1940թ.), Գյուրջիևա Մագդալինան (էթերի)[23] (ծնվ. 1951թ.) և այլոք այս թեմայով տրված հարցին պատասխանեցին, որ իրենց բոլորովին անծանոթ է այդ սովորույթը: Նույն պատասխանը տվեց նաև Վրաստանի Դմանիսի շրջանի Գորա քաղաքի նախկին բնակիչ, այժմ Հունաստանի Ալեքսանդրուպոլիս քաղաքում բնակվող Սոֆիա Ցիլինգարիդիսը[24] (ծնվ. 1937թ.):

Ամփոփելով սույն թեմայի վերաբերյալ գրականությունը և մեր գրառած դաշտային ազգագրական նյութերը ստանում ենք հետևյալ պատկերը: Ճիշտ է Պոնտոսի հույները, թեկուզ ինչ-ինչ տեղական տարբերություններով, պատմական հիշողության և սերնդե սերունդ փոխանցվող ավանդության շնորհիվ փորձել են պահպանել իրենց նախնիներից ժառանգություն ստացած բազում ավանդույթներ, սակայն այլէթնիկ միջավայր տեղափոխվելով ժամանակի ընթացքում դրանց մի մասը մոռացության է մատնել, իսկ մյուս մասն էլ փոփոխության է ենթարկվել: Դրա վառ ապացույցը նշանի գաթայի ավանդույթի հետագա վերացումն է և հարսի գաթայի վրայից կենաց ծառը խորհրդանշող խնձորենու ճյուղի անհետացումը: Ինչ վերաբերում է ընդհանրապես հարսի գաթային, ապա ենթադրում ենք, որ ժամանակի ընթացքում այս սովորույթը ևս կանհետանա, քանի որ Հունաստան վերադարձած հույների նոր սերունդն ընդհանրապես հեռու է նախնյաց ավանդույթներից և մաս է կազմում եվրաինտեգրված հասարակության:

---

[22] ԴԱՆ, տ. 2, 2009, (Հուն. հանր. Դիդիմոտիխո), էջ 4-6:
[23] ԴԱՆ, տեսաերիզ 9, 2010, (Հուն. հանր., Սալոնիկ):
[24] ԴԱՆ, տ. 3, 2009, (Հուն. հանր. Ալեքսանդրուպոլիս), էջ 5-7: